ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 26

«18» 02 2021 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 22.01.2021Թ. N 2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի քննության ժամկետների երկարաձգման պատճառները պարզելու և դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ կառուցակարգեր սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 22.01.2021թ.՝ «Քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 25.12.2007թ. N 20/3 ցուցումը և ՀՀ դատախազության կոլեգիայի 06.03.2020թ. նիստի որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետը և 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2 հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված N 1-ի հավելվածը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 22.01.2021թ.՝ «Քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 25.12.2007թ. N 20/3 ցուցումը և ՀՀ դատախազության կոլեգիայի 06.03.2020թ. նիստի որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետը և 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2 հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետում «տեղակալին» բառերից հետո լրացնել «(պատճենը՝ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչություն)» բառերը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. փետրվարի «18»
N 26 հրամանի

«Հավելված 1

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի «22»
N 2 հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

---------- ամսվա մնացորդ քրեական գործերի քանակի և ընթացքի վերաբերյալ
(հաշվետու ամիսը)

---------- մարզ (վարչական շրջան, կայազոր)
(դատախազության անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման (վերսկսման) ամսաթիվը և հոդվածը	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմինը	հսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրությունը	ընթացքը	6 ամսից ավել ժամանակով քննվող քրեական գործերի երկարաձգման պատճառները
1	2	3	4	5	6	7	8

»